Washington State Department of Social & Health Services
Transforming lives

Արագ խորհուրդներ անձնական մատակարարների լրացուցիչ ժամանակի և աշխատանքային շաբաթվա սահմանաչափի վերաբերյալ

Աշխատանքային շաբաթն է՝

- Կիրակի, 12:00 a.m.-ից (կենսգիշեր) մինչև շաբաթ, 11:59 p.m.-ը
- Աշխատանքային շաբաթը կարող է կիսել վճարման ժամկետները:
- Աշխատանքային շաբաթը կարող է կիսել ամիսները:



Ձեր աշխատանքային շաբաթը գերազանցելու համար Դուք պայմանագրային գործողություններ չեք ստանա հետևյալ դեպքերում՝

- Պահանջված DSHS վերապատրաստում
- Հաստատված ճամփորդության ժամ
- Վարչական ժամ
- Վճարովի արձակուրդ (PTO)

Ինչպե՞ս կարող եմ խուսափել պայմանագրային գործողությունից:

- Մշտապես պլանավորեք Ձեր ժամանակացույցը նախքան աշխատանքային շաբաթը սկսվելը, և այն գրի առեք:
- Եթե հաճախորդի կարիքները փոխվեն, և Դուք ստիպված լինեք աշխատել մեկ այլ ժամանակացույցով, որը ազդում է Ձեր աշխատանքային շաբաթվա սահմանաչափի վրա, անմիջապես կապվեք Ձեր հաճախորդի գործի կառավարչի հետ:
- Յուրաքանչյուր աշխատանքային օրվանից հետո գրանցեք Ձեր աշխատած ժամանակը Ձեր ժամանակացույցում: Լավ կլինի, եթե գրանցեք այն նաև թղթե օրացույցի վրա: Հաճախակի ճշտեք՝ վստահ լինելու համար, որ մնում եք Ձեր աշխատանքային շաբաթվա սահմանաչափում:
- DSHS-ը բավարար ռեսուրսներ ունի՝ օգնելու համար Ձեզ և Ձեր գործատուին/հաճախորդին ավելին իմանալու, թե ինչպես կառավարել Ձեր ժամանակացույցը՝ Ձեր աշխատանքային շաբաթվա սահմանաչափի մեջ մնալու համար: Ռեսուրսները հասանելի են www.dshs.wa.gov/altsa/IPOT հասցեով:

Որքա՞ն երկար են պայմանագրային գործողությունները մնալու իմ պայմանագրային գործում:

- Յուրաքանչյուր պայմանագրային գործողություն Ձեր գործում կմնա 12 ամիս՝ պայմանագրային գործողության ծանուցման ամսաթվից սկսած: 12 ամսից հետո պայմանագրային գործողությունը կփակվի:

Պայմանագրային գործողություններում կամ ստացված նամակում նշված ամիսը՝ դա վճարման ամիսն է՝

- Եթե նամակում նշվում է «ապրիլ ամսին վճարված ժամերի համար», աշխատած ժամերը կարող են ներառել դրան նախորդող ամսում (մարտ) աշխատած ժամերը:
- Եթե հավելյալ ժամ պահանջած ամսվա վեաբերյալ հարցեր ունեք, կապվեք գործի կառավարչի հետ: